ԿՈԴ
050.0041 Ն. 13.04.21

13 ապրիլի 2021 թվականի թիվ 41-Ն

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2021 թվականի առաջին եռամսյակ)

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ ***Մարտին Գալստյան***

2021 թ. ապրիլի 16
Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2021թ. առաջին եռամսյակ)

2021 թվականի ապրիլի 13-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլային շեմի սահմանաչափը (այսուհետև նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուֆեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազելյան մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է հետևյալ փաստերի համապարփակ վերլուծությամբ.

1. 2020թ. չորրորդ եռամսյակի դրությամբ մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 74.25%[1]: Այս ցուցանիշի համար հաշվարկված ճեղքվածքը (վարկեր/ՀՆԱ-ի տարբերությունը իր երկարաժամկետ տրենդից) կազմել է մոտ 6.3 տոկոսային կետ, ինչը Բազելյան մեթոդաբանության համաձայն ենթադրում է ԿՀԲ դրական սահմանաչափի կիրառում[2]: Սակայն նման մեծ ճեղքվածքը ոչ թե ավելցուկային վարկավորման արդյունք է, այլ պայմանավորված է 2020թ. գրանցված ՀՆԱ նվազմամբ: Այս իրավիճակում ԿՀԲ սահմանաչափի վերաբերյալ որոշումների կայացման համար առաջնային են համարվում վարկային ցիկլի դրսևորումները բնութագրող այլ վաղ ահազանգման ցուցանիշները, ինչպես նաև փորձագիտական դատողությունները:
2. 2020թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Ֆինանսական ցիկլի ինդեքսը շարունակել է ցուցաբերել նվազման միտում, որն առկա անորոշությունների պայմաններում շուկայի մասնակիցների կողմից ռիսկի ախորժակի նվազման և տնտեսության վարկավորման մասով պահպանողական վարքագծի դրսևորման

[1] Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով):

2 Բազելյան կոմիտեի մեթոդաբանության համաձայն, դրական ԿՀԲ սահմանելու համար որպես մեկնակետ առաջարկվում է կիրառել վարկեր/ՀՆԱ ցուցանիշի 2 տոկոսային կետ ճեղքվածքը:

արդյունք է: Մասնավորապես՝ վարկավորման գրեթե բոլոր ոլորտներում արձանագրվել է նոր տրամադրվող վարկերի հոսքերի ծավալների նվազում: Նվազումը հատկապես զգալի է եղել սպառողական վարկավորման մասով: Հիփոթեքային վարկերի մասով արձանագրվել է նոր տրամադրվող վարկերի ծավալների համեմատաբար թույլ նվազում, ինչի արդյունքում հիփոթեկային պորտֆելի տարեկան աճի տեմպը պահպանվել է բավականաչափ բարձր մակարդակում:

3. Ընդհանուր վարկային պորտֆելի աճի տեմպերի դիտարկվող շարունակական նվազման պարագայում, Կենտրոնական բանկը մշտադիտարկում է նաև առանձին ոլորտային ուղղություններով վարկավորման հնարավոր ռիսկային զարգացումները: Վերջիններիս արդյունավետ հասցեագրման համար Կենտրոնական բանկը քննարկում է առավել թիրախային գործիքակազմի ներդրման հնարավորությունը:

Հաշվի առնելով վարկային շուկայի վերը նկարագրված միտումները, դեռևս առկա անորոշությունները, տնտեսության և ֆինանսական համակարգի վրա կորոնավիրուսի տարածման բացասական ազդեցությունները՝ **Կենտրոնական բանկը կարևորում է բանկերի կողմից ՀՀ տնտեսության վարկավորման գործընթացների անընդհատությունը և նպատակահարմար է գտնում կապիտալի հակացիկլիկ բուֆերի դրույքաչափը թողնել անփոփոխ՝ 0% մակարդակում:**